

## Կարինե Եղիազարյան, Քարմիլե Եղիազարյան

### ԱՂԲՅՈՒՐ ՍԵՐՈՔ (ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ)

*Քանալի բառեր- Աղբյուր Սերոք (Սերոք Վարդանյան), Սոսե, Սոխորթ, Ախլաթ, Բիթլիս, Նեմրուք, ՀՅԴ, Բաբշեն:*

Աղբյուր Սերոքը (Սերոք Վարդանյան) ծնվել է 1864 թ. Ախլաթ գավառի Սոխորդ գյուղում, 300-ամյա համբավավոր Խչենց բարեկեցիկ գերդաստանում: «... Սեւօ Խչենց տունն իւր հիւրասիրութեամբ եւ պարկեշտութեամբ մեծ համբաւ կը վայելէր Ախլաթի գաւառի մէջ եւ ոչ միայն հայերը, այլեւ օտարազգիները կը յարգէին այդ մեծ օձախը»<sup>63</sup>, - կարդում ենք Վաղարշակ Օխիկյանի հուշերում: Սերոքի չորս եղբայրները շարունակում էին իրենց նախնիների լավագույն ավանդույթները: Ապրում էին միասին, ունեին ընդարձակ հողեր, 24 լուծ եզներ, բազմաթիվ անասուններ, ոչխարի հոտ: Սերոքն իր չորս եղբայրներից ամենափոքրն էր և ընտանիքի սիրելին: Իրենց գյուղի քահանայի մոտ սովորելով գրաձանաչություն՝ թողնում է ուսումը և հիմնականում զբաղվում որսորդությամբ: Հենց մանուկ հասակում Սերոքը ցուցաբերում է մեծ հակում դեպի զենքն ու որսորդությունը: Երիտասարդական արյունը եռում է պատանի Սերոքի երակներում, երբ նրա մեծ եղբայրը՝ Մխեն, դաշույն ու որսորդական հրացան է նվիրում նրան: Որսորդության առաջին փորձերը սկսում է գյուղի հավերից, ծտերից ու կաչադակներից: Սա առիթ հանդիսացավ զինավարժության ու նշանաձգության մեջ հմտություն ձեռք բերելու: Սերոքի կյանքն այսպես շարունակվել է մինչև 21 տարեկան հասակը, երբ նրա միտքը սկսեց տարվել հասարակական խնդիրներով: Հորեղբայրը նկատելով, որ Սերոքը հեղափոխական ու ըմբոստ հոգի ունի, նրան «խելոքացնելու» համար 1891 թ. ամուսնացնում են Նեմրուքի փեշերի Թեղուտ գյուղի Որո-Ասանտուրի ընտանիքի գավակ 13 ամյա աղջնակ Սոսեի հետ: Սոսեն համամիտ էր Սերոքի ըմբոստ տրամադրությանը և հաճախ էլ խրախուսում էր նրա խիզախությունը. «Բայց այդ արգելք չի լինիր անոր բնական կորովի զարգացման: Մանաւանդ, որ անոր ամուսնական լծակից Սոսէն, զիւղացի սովորական հարսներէն տարբերուելով, համամիտ էր Սերոք Աղբիւրի ըմբոստ տրամադրութեան եւ յաճախ անոր խիզախութիւնը կը խրախուսէր: Այս պարագան, աւելի քան կոգետորէր Սերոք Աղբիւրը»<sup>64</sup>, - պատմում է Վ. Օխիկյանը:

Երբ քրդերը հարձակվում են գյուղի վրա և գողանում Խչենց ոչխարները, հարայ-հրոցի վրա Սոսեն, վերցնելով հրացանը, շտապում է մոտակայքում որսի գնացած Սերոքի մոտ, համբուրում Սերոքի ձակատն ու պատվիրում. «Սերոք, կամ թալանը պիտի գա, կամ քեզ գնդակ»<sup>65</sup>:

Կրակոտ երիտասարդը պատանեկան տարիքում արդեն իր ուժերը չափել էր քրդերի հետ. մի օր էլ Նեմրուք լեռան շուրջ որսորդության ժամանակ ընդհարվում է Չխուրցի երկու զինված քրդերի հետ, սպանում նրանցից մեկին, իսկ մյուսին փախուստի մատնում: Ոստիկանության ձեռքը չընկնելու համար հարազատների խորհրդով հորեղբայր Առաքելը Սերոքին ուղարկում է Կ.Պոլիս՝ այնտեղ բնակվող մյուս հորեղբոր մոտ: 1891 թ. ամռանը Սերոքը մեկնում է Կ.Պոլիս և նույն թվականին անդամագրվում է ՀՅԴ-ին<sup>66</sup>:

Ախլաթի կառավարիչն ու Բաղեշի կուսակալը տեղեկագրով հեռագրում են Կ.Պոլիսի ոստիկանապետին՝ հայտնելով նրա արարքի մասին, և խնդրում ձերբակալել նրան: Մոտալուտ վտանգը զգալով՝ Սերոքը 1892 թ. հեռանում է օսմանյան մայրա-

<sup>63</sup> «Սերոք Աղբիւր (կեանքն ու գործունէութիւնը)», գրեց՝ Վաղարշակ Օխիկեանը, Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1926, № 11, էջ 28:

<sup>64</sup> Նույն տեղում, էջ 39:

<sup>65</sup> «Յեղափոխական ալպոմ», Պէյրուք, 1965, էջ 37:

<sup>66</sup> Տե՛ս Փափազյան Վ., Իմ յուշերը, հ. 1, Պոստըն, 1950, էջ 141:

քաղաքից և մեկնում Ռումինիայի Սուլինա քաղաք, «ուր սրճարան մը կբանա, ավելի ետք խոհարարութեամբ կգբաղվի»<sup>1</sup>:

1893 թ. Սուլինայում խոլերա հիվանդության տարածման պատճառով Սերոբը հեռանում է քաղաքից և մեկնում Բաթում: «Քիչ յետոյ Բաթումէն կանցնի Կարին, այն տեղի Դաշնակցական կոմիտէին հրահանգներուն համեմատ գործելու համար: Կարինի կոմիտէն նախապէս հաւատք չընծայեց՝ թէ այդ երիտասարդը կարող ըլլայ երկրին մէջ ծանր գործի մը գլուխը անցնիլ: Սերոբ ճարահատ, բայց ոչ յուսահատ, իր կուրծքին տակ ամուր պահելով իր հայրենիքի տաք սէրը, կանցնի Կովկաս, ինքզինք ծանօթացնելու և իր ձայնը լսել տալու համար»<sup>2</sup>, - պատմում է Եղիշե Զիլինկիրյանը: Սերոբը մեկնում է Թիֆլիս, որտեղ ծանոթանում է այն ժամանակվա աչքի ընկնող դաշնակցականներից Ա. Թադևոսյանի և ՀՅԴ հիմնադիր Քրիստափոր Միքայելյանի հետ: «Թիֆլիսի մէջ Սերոբ Աղբիր ուշադրութեամբ կը հետեւի Դաշնակցութեան ղեկավարներու՝ Քրիստափորի եւ Ռոստոմի հրահանգներուն եւ անոնց խորհրդով 1894-ի գարնան, երեք ընկերներու՝ Թեղուայ Նատոհի, Փոխուսցի՝ Մարո Սվարի եւ Ուրանեց Թամօհի հետ, կը մտնէ երկիր՝ իւր բնագաւառ Ախլաթ ու Գիւզալդէրէ»<sup>3</sup>, - պատմում է Վ. Օխիկյանը:

**Աղբյուր Սերոբի հայդուկային գործունեության սկիզբը:** 1894 թ. Տարոնի ժողովրդին գէնք հասցնելու նպատակով Կովկաս էր մեկնել Հրայր Դժոխքը, որտեղ անդամագրվելով ՀՅԴ-ին, հատուկ նպատակով մեկնում է Ռումինիա, այնուհետև Դրին, իսկ այնտեղից Կովկաս՝ իր հետ բերելով 50 կամավորներ, որոնց թվում էր երիտասարդ Անդրանիկը: Կարսում հավաքված այդ կամավորները բաժանվում են երեք խմբի. առաջին խումբը թվով 27 հոգի պետք է առաջնորդեր Սերոբը, մյուս երկու խմբերը՝ Հրայրի ու Արամ Արամյանի գլխավորությամբ 1895 թ. պետք է անցնեին Երկիր (Արևմտյան Հայաստան): «Հինգ տարի պանդուխտ մնալու ետքը՝ Սերոբ, որոշ ծրագրով և աւելի հասունցած ու կազմակերպւած գաղափարներով, վերադարձաւ իր հայրենի երկիրը, որուն հողն ու ջուրը կը քաշէին զինքը: Իր գործունէութեան կեդրոն և վայր ընտրեց մասնաւորապէս Ախլաթի գաւառը և ընդհանրապէս Բաղէշի նահանգը»<sup>4</sup>, - կարդում ենք Աղբյուր Սերոբի ու Գևորգ Զաուշի կյանքն ու գործունեությունը լուսաբանող կենսագրական մի ժողովածուում: Սերոբի խմբի 27 ընտիր երիտասարդներն իրենց հետ տանում էին 42 բերդան մակնիշի հրացան: Խումբը հոկտեմբերի 1-ին անվտանգ հասնում է Ախլաթ: Վրեժի ու ազատության մարտիկը 1895 թ. ջարդերի ժամանակ Սոխորդում պահում է 12 կտրիճների, իսկ մնացած հայդուկներին ուղարկում է գավառի տարբեր գյուղեր՝ ինքնապաշտպանական կռիվները ղեկավարելու համար: Քրդերը խուճապահար փախչում են Սոխորդից՝ թողնելով 7 դիակ, որոնց թվում նաև իրենց շեյխինը: Սերոբի մարտիկները գերի են վերցնում 40 քրդերի, որոնց, ձեռքերն ու ոտքերը կապելով, հանձնում են կայմակամին: Բացի Սոխորդից՝ Սերոբը ջարդերից փրկում է Ախլաթի նաև այլ գյուղերի բնակիչներին: Երբ թուրքական ու քրդական ոճրագործները հարձակվում էին գավառի այս կամ այն գյուղի վրա, բնակիչները դիմում էին Սերոբին: Վերջինս էլ, նրանց վրա հարձակվելով և հետապնդելով, ջախջախում ու վշտնդում էր: Շնորհիվ Սերոբի խմբի անդուլ ջանքերի՝ 1895 թ. Ախլաթի 27 գյուղեր գերծ մնացին կոտորածներից<sup>5</sup>:

Աղբյուր Սերոբի հմայքը օր օրի բարձրանում էր ժողովրդի աչքում: Ախլաթի հայությունը զինված խուժանի հարձակումների ժամանակ հաղթական դուրս գալուց հետո, օրինելով քաջարի հայդուկապետին և իր փրկությունը նրան վերագրելով, կնքում

<sup>1</sup> Լազեան Գ. , Յեղափոխական դէմքեր (մտաւորականներ, հայդուկներ), Գահիրէ, 1945, էջ 295:

<sup>2</sup> Եղիշէ Եպս. Զիլինկիրեան, Փնջիկ բարոյական առածներու եւ յիշատակ առաջնորդութենէս, Երուսաղէմ, 1928, էջ 85:

<sup>3</sup> «Սերոբ Աղբիր» (կեանքն ու գործունէութիւնը), Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1926, № 11, էջ 40:

<sup>4</sup> «Աղբիր Սերոբ եւ Գէորգ Զավուշ (կենսագրական գիծեր, իրենց պատկերներով)», Աթենք, 1933, էջ 19:

<sup>5</sup> Տե՛ս «Սերոբ Աղբիր», Կենսագրական, «Դրօշակ», 1901, № 2, էջ 40:

է Աղբյուր անունով (կյանք պարգևող). «Վերեւ Աստված, ներքև Սերոբ՝ կըսեր ժողովուրդը»<sup>1</sup>:

Աղբյուր Սերոբը ժողովրդի սիրելին էր դարձել, որովհետև նա ոչ թե մեծ հայդուկային կռիվներ էր ձեռնարկում, այլ կռիվները վարում էր ժողովրդի առօրյա կարիքներից ելնելով, նա պաշտպանում էր գյուղացիներին ավազակներից, օգնության էր հասնում վտանգի ռոպեին և անգն ու անպաշտպան հայությանը փրկում սարսափի ճիրաններից: «Քաղցր լեզու և առյուծի սիրտ մը ուներ. իր վեհանձն բնավորությամբ՝ պաշտելի կղառնա ժողովրդին, իսկ սարսափը՝ թուրք ու քիւրտ բեկերուն և ավարառու խուժանին»<sup>2</sup>: ժողովուրդը սկսեց առասպելներ պատմել Սերոբի մասին՝ իբր նա մեկ անգամից 7 քրդի գլուխ է կտրել, որ թուրքերի ձեռքից ազատվելու համար նետվել է Վանա լիճը և 3 օր լողալով հասել էին կղզի<sup>3</sup>:

Ախլաթի գյուղերում, բացի մարտական խմբեր ստեղծելուց, Սերոբը յուրաքանչյուր գյուղում ձեռնահաս ու արդարամիտ մարդկանցից ստեղծում էր առանձին մարմիններ, որոնց իրավասության տակ էր դնում հայերի համար դատական վճիռներ արձակելու իրավունքը: Այդ «ինքնավար դատարանները» մի տեսակ անջրպետ էին դառնում Ախլաթի գյուղացիության ու կառավարության միջև: Վերջ էր դրվում իշխանության դատական մարմինների հետ շփվելիս անխուսափելի կաշառակերությանը և կողոպուտին<sup>4</sup>:

Նեմրութի գագաթը դարձնելով իր ապաստանը՝ Սերոբը վրեժի ու ցասման կրակ էր տեղում թշնամիների գլխին: Շատ մատնիչներ, դավաճաններ, կրոնափոխ լրտեսներ, հասնելով Նեմրութին, իրենց մահավճիռը լսելով, այնտեղից գահավիժում էին ցած<sup>5</sup>:

«ՀՅԴ դրօշի տակ մտնող անհատներուն՝ Սերոբ Աղբիւրը յատուկ ծիսակատարութեամբ երդում կատարել կուտար՝ սենեակի մէջտեղ դրուած՝ խաչի, աւետարանի ու դաշոյնի վրայ, ծունկի իջեցնելով: Յեղափոխութեան սուրբ խորանին ուխտի եկած իւրաքանչիւր անհատ բարձր ծայնով այս նախադասութիւնը արտասանելու կը պարտաւորուէր.- «Ես, այսինչս, այս սուրբ սեղանի առջեւ ծունկի իջած՝ կուխտեմ, որ կեանքս զոհեմ հայրենիքիս ազատութեան, որ՝ անաղարտ պահեմ սուրբ յեղափոխութիւնը, որ՝ բոլոր կանանց ու օրիորդներուն վերաբերուիմ իբր հարազատ մօր եւ քրոջ, որ՝ դաւաճանութեան մէջ չխնայեմ իմ հարազատներուս, որ՝ ազատութեան սուրբ ոգով դաստիարակեմ իմ զաւակներս, որ՝ եթէ շեղուիմ այս սուրբ ուխտէս, արինս հալալ լինի ընկերներուս» եւն»<sup>6</sup>, - մանրամասնում է Վ.Օխիկյանը:

Երդման այս հանդիսավոր ձևը հետագայում ընդունված կարգ է դառնում բոլոր հայդուկային խմբերում ընդգրկվող նորաթուխ զինվորների համար:

Քաջ ու հանդուգն էր Սերոբը, բայց միշտ աշխատում էր իր խիզախությունը վերագրել ընկերներին: Խիստ ու դաժան էր հայդուկապետը ֆիդայական վտանգավոր կյանքում ընդունված կանոնները խախտողների նկատմամբ: Նեմրութի գագաթին մշեցի Սիմոն Ղուկասյանը, որը հայտնի հայդուկ էր և Աղբյուրի խմբում տասնապետի աստիճան էր ստացել, կրակոցով սպանում է մի այծյամ ու նվիրում նրան: Սերոբը ոչ միայն չի ընդունում սպանված այծյամը, այլ և պահանջում է դատ հարուցել Սիմոնի դեմ, քանի որ այծյամի պատճառով կատարվել էր ավելորդ կրակոց, որը կարող էր իրենց թաքստոցը որոնող թշնամու ուշադրությունը գրավել: «Սիմոնը տասնապետ էր և ժայռ կոմիտեին պատվո խաչ ստացած էր. Սերոբը առաւ անոր խաչը և զայն պարզ զինուորի աստիճանին իջեցնելով, շաբաթ մըն ալ բանտարկեց: Այդ մասին գրեց ժայռ»<sup>7</sup>

<sup>1</sup> Համբարյան Ա., Աղբյուր Սերոբ (մահվան 100-ամյակի առթիվ), «Պատմա-բանասիրական հանդես», 1999, № 2-3, էջ 75:

<sup>2</sup> «Սերոբ Աղբիւր», Կենսագրական, «Ղրօշակ», 1901, № 2, էջ 40:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>4</sup> «Սերոբ Աղբիւր» (կեանքն ու գործունէութիւնը), Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1926, № 11, էջ 43:

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 44:

<sup>7</sup> «Ժայռ»-ը ՀՅԴ Ղարաբաղի կոմիտեն էր, որը մասնավոր մարդկանց միջոցով հատուկ պատվո շքանշաններ էր պատրաստում և ուղարկում Երկիր (Արևմտյան Հայաստան):

կոմիտեն»<sup>1</sup>, - այդ դեպքերը լուսաբանված են Սերոբի կենսագրականում: Թեև Սերոբը ժողովների ու վիճաբանությունների ժամանակ լռելյայն էր ու զուսպ, օրինապահության և կարգարահության ջատագովն էր, կտրուկ և խստասիրտ էր, չէր ներում նույնիսկ հարազատ եղբորը<sup>2</sup>:

Թուրքական իշխանությունները ջանում էին որսալ Սերոբին: Նրանք գործի են դնում ոստիկաններին, զինվորներին ու լրտեսներին, բայց անարդյունք: Կայմակամը հարցաքննում է Սերոբի գյուղապետ եղբորը՝ Մխեհին՝ ցանկանալով իմանալ Սերոբի գտնվելու վայրը: Սակայն վերջինս պատասխանում է, որ նա տարիներ առաջ մահացել է Ռուսաստանում պանդխտության մեջ: Օսմանյան պաշտոնյաները չհավատալով Մխեհին, կազմակերպում են տարաբնույթ խուզարկություններ, հետախուզություններ, բայց ասարդյուն: 1896 թ. ծննդանը նրանք լուր են ստանում, որ Սերոբը գտնվում է Շամիրամ գյուղից 3 ժամվա հեռավորության վրա: Ոստիկանները շտապում են որսալ Սերոբին: Վերջինս չի հասցնում թաքնվել և հարկադրաբար կռվի է բռնվում ու կռվելով բարձրանում Նեմրութ սարը: Ջինվորները հետապնդում են նրան: Սակայն թանձր ամպը պատում է Նեմրութը և Սերոբին թաքնվելու հնարավորություն տալիս: Այստեղ իր քաջագործությունների համար Սերոբին կնքեցին «Նեմրութի ասլան», «Նեմրութի հսկա» անուններով:

Այնուհետև Սերոբն իջնում է Շամիրամ, ապա գնում Ջրիոր և մի քանի օր թաքնվում նրա մոտերքում գտնվող Գրգիռ քարայրում<sup>3</sup>:

1897 թ. հունվարի 28-ին Սոխորդի Գրիգոր աղան իր Դավո անունով ծառայի միջոցով տեղեկացնում է ոստիկանությանը Սերոբի գյուղում լինելու մասին: Թուրքերը 200 ձիավորներով պաշարում են գյուղը: Առանց իր մարտական ընկերների՝ հարազատներին տեսության եկած Աղբյուրը, զգալով դիմադրելու ավելորդությունը, հագնում է «լաքաներ» (ժամանակակից դահուկին փոխարինող) և գյուղի ծայրից զինվորների ապշահար հայացքների ներքո սուզվում մառախուղի մեջ: Առատ ձյան պատճառով ո՛չ ձիով և ո՛չ էլ հետիոտը հնարավոր չի լինում հետապնդել Սերոբին: Եվ սարսափելի եղանակին Ախլաթի լեռները բարձրացող Աղբյուր Սերոբին համարում են զոհված և այդ մասին անգամ տեղյակ պահում Բիթլիսի կուսակալին: Մինչդեռ անվեհեր հայուկապետը, մեծ դժվարությամբ սառնամանիքից և բուք ու բորանից անցնելով Շամիրամ գյուղ, թաքնվում է Սողոեմ տանը<sup>4</sup>:

Գարնանը դուրս գալով իր թաքստոցից՝ ի ուրախություն Ախլաթի հայության, որը քրդերի ու թուրքերի տարածած լուրերից իր պաշտպանին մահացած էր համարել, Սերոբը, հավաքելով շուրջն իր քաջերին, «մահ դավաճաններին» նշանաբանով Նեմրութից իջնում է Ախլաթ:

Բիթլիսից Դավոյենց Խաչոյի մատնությամբ ու ցուցմունքով շատ երիտասարդներ էին ձերբակալվել, իսկ Մարգար վարժապետի մահից հետո (1893 թ.) շուրջ 30 աչքի ընկնող հայեր այդ հրեշի պատճառով տառապում էին Բիթլիսի բանտում: Սերոբը, Բիթլիսի հոգևոր առաջնորդ Եղիշե վարդապետ Չիլինկիրյանից տեղեկանալով ձերբակալությունների ամբողջ պատմությանը, հրահանգում է ընկերոջը՝ բիթլիսիցի Մուշեղին, ահաբեկել մատնիչին:

Մուշեղը, մի գիշեր մտնելով Բիթլիս, ատրճանակի երեք կրակոցով վերջ է տալիս մատնիչ Դավոյի Խաչոյին<sup>5</sup>:

Աղբյուր Սերոբը անցնում է Գյուլգազարե գյուղը և ահաբեկում վեց տղամարդու և երկու կնոջ, որոնց դավաճանությունը նախապես ապացուցվել էր: Այնուհետև, մտնելով հայրենի գյուղ, սպանում է իրեն մատնող Գրիգոր աղային, Կոշտոյան Պողոս աղային, Ծղակ և Կծված գյուղերի տանուտերեր Շնդոյին և Բղդո Պետրոսին<sup>6</sup>:

<sup>1</sup> Սերոբ Վարդանեան. Աղբիւր Սերոբ, Ժընեւ, 1907, էջ 6-7:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 10:

<sup>3</sup> Տե՛ս Համբարյան Ա., Աղբյուր Սերոբ (մահվան 100-ամյակի առթիվ), էջ 75:

<sup>4</sup> Տե՛ս «Սերոբ Աղբիւր (կենսքն ու գործունէութիւնը)», Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1926, № 11, էջ 45:

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>6</sup> Տե՛ս «Սերոբ Աղբիւր (կենսքն ու գործունէութիւնը)», Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1926, № 11, էջ 45:

Կառավարությունը արտակարգ միջոցների է դիմում Աղբյուր Սերոբին ձերբակալելու համար: Կ. Պոլսից եկած հատուկ հրամանով Բիթլիսի կուսակալից պահանջվում էր բռնել Սերոբին կենդանի կամ մեռած: Բիթլիսում ստեղծված հատուկ հանձնաժողովը, շրջելով Ախլաթի գյուղերում, գյուղացիներից ստորագրություններ էր հավաքում, որ նրանք չեն օգնելու Սերոբին և նրա խմբին<sup>1</sup>:

Ձեռնարկված բոլոր միջոցների մեջ ձախողված թուրքական իշխանությունները իրենց կատաղությունը թափում են Սերոբի ընտանիքի վրա: Թալանի է ենթարկվում հարուստ Խչեենց ընտանիքը: Սաստիկ ծեծի ենթարկելուց հետո մեծ եղբորը՝ Մխեին, տեղափոխում են Բիթլիսի բանտը: Բայց այս ամենը չի ընկճում քաջ հայդուկին, ավելին՝ հայրական տան թալանի և տանուտեր եղբոր բանտարկության նկատմամբ «անտարբեր» Սերոբը, դիմելով իր ընկերներին, ասում է. «Պետք է բախտավորները երբեմն լան, որ թշվառները մխիթարվեն: Տեսեք, մեր տունը ձեզի օրինակ, ես Ախլաթի Խչեի մեծ օջախը քանդեցի, որ շատ մայրեր իրավունք չունենան զիս անիծելու, ըսելով. մեր տունը քանդողին տունը քանդվի»<sup>2</sup>: Մեկ այլ հուշագրի մոտ կարդում ենք հետևյալ տողերը. «Սերոբի պատճառով, քանդուած էր Խչեենց մեծ ու հարուստ գերդաստանը: Բայց Սերոբ ատկից կորովի եւ գոհաբերութեան օրինակներ կը հանէր ուրիշներուն, որովհետեւ իր ժողովրդին հանդէպ սէրը, անոր ցաւերուն հանդէպ կարեկցութիւնը խոր արմատ նետած էին իր մաքուր սրտին մէջ»<sup>3</sup>, - կարդում ենք զորավար Սմբատի հուշերում:

1897 թ. սեպտեմբերին Սերոբը Ախթամարի վրայով Սիմոնի, Մուշեղի, Փալապեխ Կարապետի և երկար Նատոյի հետ մեկնում է Վան՝ հանդիպում ունենալու Վազգենի (Տիգրան Տերոյան) հետ, որը Վանի և ամբողջ Վասպուրականի հայդուկային խմբերի ղեկավարն էր:

1897 թ. Խանասորի արշավանքի նախօրեին, լինելով Սալմաստում, Վազգենը Գուրգենի հետ միասին վերցնելով 35 հայդուկներ, անվտանգ հասնում են Վան: «Խումբը Կարճկան թողնել է տք, ան իրեն հետ կառնէ Սիմոնը, Մուշեղը, Փալապեխը ու Նադրօն, եւ Աղթամարի վրայով Վան կանցնի, ուր նախապէս եղած որոշման համաձայն՝ տեսակցութիւնը տեղի կունենայ Ականց գիւղի մէջ: Սերոբ Աղբիւրը, - շարունակում է Վ. Օխիկյանը,- այստեղ կը հանդիպի Վազգէնին ու ընկերներուն եւ, պէտք եղած խորհրդակցութիւնը ունենալէ ետք, կը վերադառնա Ախլաթ, իրեն հետ բերելով՝ Կովկասէն նոր երկիր մտած Գուրգէնն ու Փարսանդը եւ Շապինգարահիսարցի՝ Անդրանիկը, Սարգիսը, Գէորգն ու Նշանը»<sup>4</sup>:

Աղբյուր Սերոբի հետ հասնելով Նեմրութ՝ Գուրգենը ստանձնում է այդ շրջանի հայության ինքնապաշտպանական գործը: Գուրգենի մարտական գործունեության համար հենարան է դառնում Աղբյուր Սերոբի խումբը, իսկ գաղափարական աշխատանքների համար՝ Հրայր Դժոխքը: 1896 թ. աշնանը Բուլղարացու (Պետրոս Սերեմձյան) խմբի հետ Գուրգենը մտնում է Վան, բայց տեղում թուրքերի հետ ունեցած կարճ ընդհարումից հետո 1897 թ. հունվարի 25-ին անցնում է Թիֆլիս: Նույն թվականի հուլիսի 19-ին Գուրգենը Վազգենի խմբի հետ հասնում է Վան<sup>5</sup>: Իսկ Աղբյուր Սերոբը զբաղված էր հայատյացներից վրեժ լուծելով:

Բիթլիսի ոստիկանության կոմիսար Հելինը ամբողջ Բիթլիսի ու նրա շրջակա հայության սարսափն էր դարձել իր դժոխային խոշտանգումներով, ֆիդայիներին օգնելու «ամբաստանությամբ», շատ հայերի անտեղի ձերբակալություններով:

Նեմրութի զագաթում վրիժառուների կարճ խորհրդակցությունն որոշում է ոչնչացնել այդ հրեշին: Ֆիդայիներն իմանում են, որ Հելինը հարաբերության մեջ է քաղաքի մի հայ կնոջ հետ: 1898 թ. փետրվարին Սերոբը, Սիմոնը, Մուշեղը և Գուրգենը, գիշերով մտնելով այդ կնոջ տուն, ստիպում են վերջինիս լռելու, իսկ իրենք թաքնվում են տան մի անկյունում: Գիշերվա ուշ ժամին գալիս է ոստիկանապետը և մահապատժի

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>2</sup> «Զօրավար Սմբատի յուշերը», Ա հատոր, 1900-1914, Փարիզ, 1936, էջ 111:

<sup>3</sup> Նույն տեղում: Տե՛ս նաև Լազեան Գ., նշվ. աշխ., էջ 295:

<sup>4</sup> «Սերոբ Աղբիւր (կենանքն ու գործունէութիւնը)», Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1926, № 11, էջ 46:

<sup>5</sup> Նորեան Ա., Դրագներ Գ. Զ. Դաշնակցութեան գործունեութիւնից. Ա. տասնամեակ, Բօստոն, 1917, էջ 448:

ենթարկվում<sup>1</sup>: Նրա սպանությունից երկու շաբաթ անց Սերոբի և Գուրգենի անդուլ աշխատանքի շնորհիվ Բաղեշի բանտի ամուր պատը ծակվեց ու գիշերով փախան 17 քաղաքական կալանավորներ, որոնք 3-10 տարվա բանտարկության վճիռ ունեին: Փախչողների մեջ էին Սերոբի մեծ եղբայր Մխեն, Պաս գյուղի բնակիչ Հովհաննես Ջուլումաթը, վարդենիսցի Բարսեղը, փափշենցի Չոլախ Կարապետը, Պոռից՝ փահլևան Ավետիսը և ուրիշներ<sup>2</sup>:

Դրանից հետո Սերոբի կինը, տղաները և եղբայրները՝ Մխեն ու Ջաքեն, ընտանիքներով միանում են հայդուկներին և նրանց հետ մասնակցում մնացած կռիվներին<sup>3</sup>:

Ձենքի պակաս կար և Սերոբը գենք ձեռք բերելու նպատակով Կովկաս է ուղարկում իր հորեղբորորդուն՝ Ճարտարին (Հակոբ Կարդանյան, ծնվ.1856 թ.), որը, ժամանակին միանալով Սերոբի խմբին, աչքի էր ընկել իր քաջությամբ:

Ճարտարը ՀՅԴ Արևելյան Բյուրոյի և Կարսի կոմիտեի անմիջական օգնությամբ 1898 թ. 66 զինված կամավորներով Կաղզվանից մտնում է Ալաշկերտ և անվտանգ հասնում Ախլաթ: Նեմրութ բարձրացող խմբին Սերոբը դիմավորում է հրացանածգությամբ<sup>4</sup>: Ոգևորված այդ հաջողությունից՝ Սերոբն ու Գուրգենը նույն նպատակով նորից Կովկաս են ուղարկում Ճարտարին՝ Առյուծ Ավագի, Փալապեխ Կարապետի, Մուշեղի, Առաքելի, Ջուլումաթի, Նատոյի և Սիմոնի ուղեկցությամբ: Հասնելով Կովկաս՝ Սերոբի ուղարկած մարդիկ իրենց շուրջն են հավաքում 100 զինված կամավորների և վերադարձին Կաղզվանում խումբը բաժանելով երկու մասի՝ 1898 թ. սեպտեմբերի 1-ին մտնում են Ալաշկերտ:

Առաջին խումբը (թվով 60 հոգի) Թեղուտ գյուղի Երկայն Նատոյի և Ճարտարի գլխավորությամբ անցնելով սահմանը, քրդաբնակ մի գյուղում գիշերում է քրդերի մոտ՝ նախապես տալով գիշերավարձը: Քրդերը շտապ տեղեկացնում են հարևան գյուղի քրդերին, որոնք էլ, մտնելով մատնանշված տները, սրախողխող են անում քնած հայդուկներից շատերին:

Ճարտարի ազդանշանով հայդուկները դուրս են նետվում քարայրից և դիմահար կրակելով թշնամուն՝ սկսում են իրենց օրհասական կռիվը: Կռվի թեժ պահին զոհվում է Ճարտարի միակ եղբայրը, սակայն այդ կորուստը չի ընկճում նրան՝ ոգևորելու կռվողներին: Մինչև մթնշաղ տևող ահեղ կռվում զոհվում են բոլոր կամավորները: Կենդանի են մնում միայն Ճարտարը, Նատոն և Սիմոնը, որոնք բեկված սրտով հասնում են Ախլաթ: «Ջինատար խումբը թէև հերոսաբար դիմադրած էր բոլոր կռիվներու ընթացքին, աւելի քան մեծ կորուստներ պատճառելով թշնամիներուն, սակայն վերջը անոր ղեկավարներու անձարակութեան եւ անպարտաճանաչութեան հետեւանքով, շատերը քաղցածութենէն յուսահատ խմբ. Նատոյի հետ անձնատուր եղած էին թշնամուն: Անոնց բաժանուելու ատեն, Մուշեղը փորձեր էր սպանել Նատոն, անոր այդ դաւաճանական քայլի համար: Բայց Ճարտար Յակոբը արգիլած էր: Բացի այդքան մնացած ուժերը ի մի հաւաքելու անընդունակ գտնուած էր: Նատոն յանձնուելէ ետք Բաղեշի բանտը տարուած եւ ընկերներու հետ անխնայ կոտորուած էր: Իսկ Ճարտար Յակոբը կենդանի՝ Նէմրութ հասած էր»<sup>5</sup>, -կարդում ենք Վ. Օխիկյանի հուշերում:

Աղբյուր Սերոբը, թեև Ճարտարի ազգականն ու տարիների զինակիր ընկերն էր (որի վրա էր դրված խումբը անվտանգ Ախլաթ հասցնելու ամբողջ պատասխանատվությունը), ուզում էր մահվան դատապարտել նրան և միայն ընկերների թախանձագին խնդանքն է զսպում ահեղ հայդուկապետին՝ չկատարելու իր որոշումը: Ներում շնորհելով հանդերձ՝ Ճարտար Հակոբին խմբապետությունից իջեցնում է հասարակ զինվորի աստիճանին<sup>6</sup>:

<sup>1</sup> Տե՛ս «Սերոբ Աղբիր (կեանքն ու գործունէութիւնը)», Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1926, № 11, էջ 48:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, № 12, էջ 78:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>4</sup> Տե՛ս «Յեղափոխական ալպոմ», Պէյրուք, 1972, № 3, էջ 88:

<sup>5</sup> «Սերոբ Աղբիր (կեանքն ու գործունէութիւնը)», Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1926, № 12, էջ 78:

<sup>6</sup> Նույն տեղում:

Այս տխուր իրադարձություններից հետո գժտությունը խստաբարո Սերոբի ու նրա մի քանի զինվորների մեջ խորանալով հասնում է այնտեղ, որ Սիմոնը, Նատոն, դարվանցի Աշոտը և վարդենիսցի Բարսեղը հեռանում են խմբից: Սիմոնի գլխավորությամբ վերոհիշյալ հայդուկներն իջնում են Դարվան գյուղը և ընկնում թշնամու պատրաստած թակարդը: Անհավասար կռվում փրկվում է միայն Նատոն, որն էլ մեղայականով նորից միանում է Աղբյուր Սերոբի խմբին<sup>1</sup>:

**Բաբշենի կռիվը:** Այս դեպքերին հաջորդում է Բաբշենի նշանավոր կռիվը, որը Աղբյուր Սերոբի մղած կռիվներից ամենանշանավորն է: 1901 թ. «Դրոշակ»-ին ուղարկած իր տեղեկագրում Հրայրը գրում է. «Բաբշենի կռիվը համահավասար է Խանասորի, Խաստուրի, Բանկի ընդհարումներուն, եւ գուցէ անոնք չհասնին այդ ճակատամարին, նսեմանան սորա առջեւ, եթե համեմատության դնենք տեղը, դիրքը և թշնամու անհամեմատ ոյժը»<sup>2</sup>:

1898 թ. հոկտեմբերի 20-ին Աղբյուր Սերոբն իր 16 քաջերով իջել էր Բիթլիսից ոտքով կես ժամվա հեռավորության վրա գտնվող հայկական Բաբշեն գյուղը: Նա-խապես ստացած նամակի համաձայն՝ Բիթլիսից Սերոբին միանում են Մուշեղը, Ալեքսանը և Հաճի Հակոբը:

Բիթլիսի ամենահարուստ հայը՝ Խաչմերուկյան Հովակիմ աղան, որը կուսակալին իր ծառայությունն էր առաջարկել, Բաբշենից Բիթլիս եկող մի կնոջից իմանում է Բաբշենի պատվավոր հյուրերի գալստյան մասին և շտապում է այդ մասին տեղեկացնել Բիթլիսի կուսակալին: Վերջինս «Սուլթան Համիտին յատուկ պատուէր ստացած էր, հնար եղածն ընել, ողջ կամ մեռած ձեռք ձգելու համար՝ Սերոբ փաշան»<sup>3</sup>: Գիշերվա ժամը 12-ին Բաբշենը պաշարվում է հարյուրավոր զինվորներով: Հրամանատարը պահանջում է զինվորներին հանձնվել, բայց բացասական պատասխան ստանալով՝ գրոհում է նախապես դիրքեր մտած հայդուկների վրա: Երկու ժամ տևող կռվից հետո թուրք հրամանատարը մեկնում է Բիթլիս և իր հետ բերում լրացուցիչ ուժ և երկու թնդանոթ: Գիշերվա ժամը 2-ից վերսկսվող կռվի ժամանակ Սերոբի հրամանով Փալապետի Կարապետի դիպուկ կրակոցով սպանվում է թնդանոթաձիգների հրամանատարը: Ընդամենը 12 արկ արձակելուց հետո թնդանոթները լքում են: «Աղբիւրը ամբողջ կռուի ընթացքին բոլոր ճգնաժամերուն օգնութեան կը հասնի եւ իր ներկայութեամբ ու խրախուսական խօսքերով առիւծի կը փոխէ պաշարուած հայ քաջերը, որոնք արհաբար կը կռուին:

Կռիւը կատաղի մոլեգնութեամբ կը տեսէ մինչեւ երեկոյան մութը, եւ բաւական հեռաւորութեան վրայ թշնամին գամուած կը մնայ»<sup>4</sup>, - գրում է Վ. Օխիկյանը: Այդ հաղթական կռվում տալով մեկ գոհ թշնամու 30-ի դիմաց՝ հայդուկներն առավոտյան առանց պատահարի հեռանում են գյուղից: «Սերոբի հետ այդ կռուին կը մասնակցէին Առիւծ Աւագ, Փալապետ Կարապետ, Առաքէլ, Պուլանուխցի Սարգիս, Պիթլիսցի Մուշեղ, Երկար Նատոն, Խնձորեսկցի Նատոն, Զուլումաթ և ուրիշ քաջեր: Ֆետայիները կը կռուին մեծ պաղարիւնութեամբ, իրենց կռնակը կը բարձրանար լեռը, որ Սասնոյ լեռնաշղթաներուն կը միանար: Թշնամին արդէն 30 սպանուածներ տուած էր, որոնցմէ երկուքը բանակի սպաներ էին: Թնդանոթաձիգներէն չորսը ինկած էին թնդանօթի կողքին: Դիակները կը փոխադրեն Պիթլիս, որ կռիւի ձայնը կը լսէր և վայրկեան առ վայրկեան կը սպասէր ֆետայիներու դիակներուն: Երբ թուրքերը կը տեսնեն զինուորներու և ոստիկաններու անշնչացած մարմինները շարուած կառավարութեան շէնքին առջեւ, կը զրգռուին և կը յարձակին շուկայի Հայերուն վրայ: Առաջնորդ Չիլինկիրեան վարդապետը կը դիմէր զօրքի ընդհանուր հրամանատարին և կը խնդրէ անկէ քաղաքի զօրքերով առաջն առնել անխուսափելի կոտորածին:... Ալի փաշան

<sup>1</sup> Տե՛ս «Դրոշակ», 1912, № 7-8, էջ 151:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> «Սերոբ Աղբիւր (կեանքն ու գործունէութիւնը)», Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1926, № 12, էջ 78:

<sup>4</sup> Նույն տեղում:

յիսուն զինուորներով շուկայն իջած է և կրցած է ամբոխը հանդարտեցնել և կոտորածի առաջն առնել...»<sup>1</sup>:

Նահանջելիս կռվում սրունքից վիրավորված Ջուլումաթին Աղբյուրը հանձնում է Կարապետին, որ վերջինս սպանի նրան՝ թշնամու ձեռքը կենդանի չընկնելու համար: Կարապետը, որ Ջուլումաթի ամենամոտիկ ընկերն էր, հակառակ հայդուկապետի հրահանգի, շալակում է վիրավոր ընկերոջը և տեղափոխում մի հայկական գյուղ, որտեղ լրիվ բուժում են նրան: Մեկ շաբաթ հետո Փալապեխ Կարապետը և Ջուլումաթը բարձրանում են Նեմրութի գագաթը: Հայդուկները, Կարապետի բացակայությունը տեսնելով, մտածել են, թե նա էլ է գոհվել: «Եվ ահա երկու անվանի ֆիդայիներին տեսնելով, Սերոբ մարտիկները շարքի կը կանգնեցնէ և անոնց ներկայությամբ Կարապետի ճակատը կը համբուրէ»<sup>2</sup>:

Հրայրը, խոսելով Բաբշենի կռվի նշանակության մասին, գրում է. «Հին ազգայնական պատմություններու գրվածքները շատ անգամ չափազանցութիւն կը համարենք, այս օրինակը թող լսէ ամբողջ աշխարհը, բայց ափսոս, որ միայն մի օր էր»<sup>3</sup>:

«Բաբշենի կռիւնը կամ ճիշդը՝ ճակատամարտը, բուռ մը անվեհերներու և ռազմաւոր բանակի մը միջեւ, Սերոբի համբաւին թելեր տուաւ և անունը պատկառելի ըլլաւ: Պատերազմի ասպարէզին վրայ, ուր քաջերու սահմանը գէնքն է, հայ ֆիդայիները մեկ նահատակ միայն զոհելով, ոլոր մոլոր ճամբաներէ մութ գիշերով թշնամուն յուսահատ պատնէշները կանցնէին... Առտուն, երբ լուսը բացւեցաւ, թիրքերը ամօթահար եւ ափիբերան մնացին, երբ տեսան որ բոլորը պարպւել է. թռչունները թռեր էին վանդակէն»<sup>4</sup>, - կարդում ենք կենսագրական մի ժողովածուում: Այս դյուցազնական կռվում հայ ֆիդայիները տվեցին մեկ զոհ և երկու վիրավոր, իսկ թշնամին՝ 37 սպանված ու բազմաթիվ ծանր ու թեթև վիրավորներ: Կռվի անհաջող ընթացքից մահմեդական մոլեգին ամբոխը, կատաղած Բաղեշ քաղաքի անգեն բնակչության վրա հարձակվելով, սպանեց ու վիրավորեց 21 անմեղ բնակիչների<sup>5</sup>:

Բաբշենի այս պատմական դյուցազնամարտին մասնակցում էին Աղբյուր Սերոբը, տղան՝ Հակոբը, եղբայրները՝ Սխեն ու Ջաթեն, Մուշեղը, Առյուծ Ավագը, Նատոն, Փալապեխ Կարապետը, Ջուլումաթը, Փարտապ Հակոբը, թեղուտցի Ասատուրը, Հակոն, բուլանդցի Սարգիսը, Հասոն ու Ֆլիտը<sup>6</sup>:

Բաբշենի կռվից հետո Սերոբը թուրք հասարակության համար դարձավ Սերոբ փաշա: Սակայն Տարոնի հերոսը ատելով ատում էր այդ անունը և տհաճությամբ էր այն լսում, իսկ լսելիս էլ զայրանում էր՝ ասելով. «... մենք փաշաներուն և աղաներուն դէմ կը կռիւնք, այժմ ես փաշա ըլլամ...»<sup>7</sup>:

Օսմանյան հետապնդումներից քիչ թե շատ ապահով լինելու համար Սերոբը ստիպված թողնում է Ախլաթը և բարձրանում Սասուն, ուր հյուրընկալվում է Չեփեզուզան գյուղի քահանա Տեր-Քաջի տանը (Աղբյուր Սերոբը ստանձնում է Սասնո, իսկ Գուրգենը՝ Մշո դաշտի ֆիդայական խմբերի կազմակերպման ու զինման գործը): Սերոբի հետ էին Փալապեխ Կարապետը, Առյուծ Ավագը, Բաղդասարը, Հասոն ու Ֆլիթը, Ջուլումաթ Օհանեսը, Շամիրամու Միսաքն ու Սողոն, Հատոն, բիթլիսցի Մուշեղը, բիթլիսցի Սիմոնը, ճարտար Հակոբը և այլ ֆիդայիներ<sup>8</sup>:

Բիթլիսի կուսակալը ֆիդայիներին բռնելու գործը հանձնարարում է չերքեզ ավազակապետ Ալի բեյին, որն իր դաժանությամբ և ֆիդայիների մասին գյուղացիներից տեղեկություններ կորզելու նպատակով կատարվող հարցաքննության մեթոդներով

<sup>1</sup> Սասունի Կ., Պատմութիւն Տարօնի աշխարհի, Պէյրուք, 1956, էջ 607:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> «Պրօշակ», 1901, № 5, էջ 89:

<sup>4</sup> «Աղբիւր Սերոբ եւ Գէորգ Չավուշ (կենսագրական գիծեր, իրենց պատկերներով)», Աթէնք, 1933, էջ 29:

<sup>5</sup> Տե՛ս նոյն տեղում:

<sup>6</sup> Տե՛ս նոյն տեղում, էջ 30:

<sup>7</sup> Նույն տեղում:

<sup>8</sup> Տե՛ս Համբարյան Ա., Աղբյուր Սերոբ (մահվան 100-ամյակի առթիվ), Պատմա-բանասիրական հանդես, 1999, № 2-3, էջ 77:



հայտնի էր որպես «Կռտան Ալի»: Սերոբին բռնելու համար այս հրեշը շուրջ 40 հայ տղամարդ էր ամորձատել<sup>1</sup>:

Կուսակալի կարգադրությամբ շուտով կրկին ավերվում է Սերոբենց տունը, թալանվում ունեցվածքը, ձերբակալվում են մեծ եղբայրը՝ Մխեն, ու նրա կինը և փակվում բանտում: Մյուս եղբայրը՝ Ջաքարը, դառնում է աստանդական և ի վերջո հանգրվանում Սերոբի մոտ:

Ախլաթի գյուղացիներից գենք բռնագրավելու համար Բիթլիսի կուսակալը յուրաքանչյուր գյուղից 5-10 աչքի ընկնող գյուղացիների ձերբակալեց և Բաղէշի բանտն ուղարկեց: Հակառակ այս հալածանքների՝ Չրխուր և Դատվան գյուղերը միայն երկու հրացան հանձնեցին<sup>2</sup>:

Կռվից երկու շաբաթ հետո Սերոբն իր խմբով անցնում է Սասուն և հյուրընկալվում Գելիեզուզան գյուղի քահանա Տեր-Քաջի տանը: Սուլթանական իշխանությունները շարունակում են Սերոբի փնտրտուքը՝ խոստանալով զանազան նվերներ և արտոնություններ իրենց օժանդակող գործակալներին ու լրտեսներին:

Եվ գտնվեց հոգին թուրքերին վաճառած մի հայ՝ Սասունի Գեղաշեն գյուղից ոմն Ավեն: «...Աւէն պիտի գործէր համաձայն մշակուած ծրագրի մը. թունաւորել Սերոբը եւ իր մարդիկը: Ոչ ոք կը կասկածէր Աւէին: Պարկէշտ, բարեխիղճ եւ հայրենասէր մարդու անուն ուներ գիւղին մէջ եւ շրջակայքը»<sup>3</sup>- կարդում ենք զորավար Սմբատի հուշերում: Օգտվելով այն հանգամանքից, որ Սերոբը 1899 թ. գտնվում էր Գելիեզուզանում, իր այցելություններով շահելով Տեր Քաջիի ու Սերոբի վստահությունը՝ ծխախոտի միջոցով թունավորում է Սերոբին և հայտնում Բշարե խալիլին: Հաջորդ օրը՝ նոյեմբերի 25-ին, թուրքական ու քրդական զինախմբերը խալիլի գլխավորությամբ շարժվում են Սասուն և պաշարում Գելիեզուզանը: Իմանալով այդ մասին՝ Սերոբը որոշում է կռվել թշնամու դեմ, բայց անկարող լինելով շարժվել՝ խնդրում է հայդուկներին դուրս բերել իրենց գյուղից: Նրան պաշտպան են կանգնում կինն ու եղբայրները: Սակայն Սերոբի ուժերը ջլատվել էին, մարմինը թուլացել էր, տեսողությունը թուլացել, ուստի նա չի կարողանում կրակել: «... Ան մեր ճանաչցած կայտառ, փոթորկաշունչ Սերոբը չէր: Մահը արդէն սկսեր էր չարաշուք նշանները դնել անոր դէմքին վրայ: Դեղներ ու նիհարցեր էր մէկ գիշերուան մէջ. Դէմքին գիծերը կծկուեր ու ցնցուեր էին եւ եթէ չըլլային անոր շանթարձակ աչքերը, ոչ ոք պիտի ըսէր թէ մեր լեռներու անպարտելի ոգին՝ Սերոբն էր»<sup>4</sup>, - պատմել էր Սոսեն:

Թշնամին մոտենում է, ավելի ու ավելի սեղմում պաշարման օղակը, Բշարե խալիլը գլխատում է մահամերձ հայդուկապետին, իսկ նրա հրոսակները սպանում են Սերոբի զավակին՝ Հակոբին ու եղբայրներին՝ Մխենն ու Ջաքարին, գյուղի քահանա Տեր Քաջիին և հայդուկներից չորսին, մյուս չորսը փախչելով ազատվում են: Խալիլը չի հետապնդում նրանց, քանզի արդեն հասել էր իր նպատակին: Այդ թեժ պահին Մխեհ կինը՝ քաջասիրտ Տատոն, փախցնում է Սերոբի փոքր երեխային և ազատում սրից ու կրակից: «Եւ արիւնքուշտ Քիւրտը՝ Պշարէ Խալիլ աղան կը կտրէ Սերոբի գլուխը, որ ամբողջ հարստութիւն մը, հսկայ յաղթանակ մը կարժէր բռնապետութեան համար:

Գլուխը ցիցի վրայ զարկած, յաղթականօրէն՝ զազան խուժանը պտտցուց Մուշի եւ Բաղէշի փողոցները»<sup>5</sup>, - կարդում ենք զորավար Սմբատի հուշերում: Կուսակալը, լսելով այդ մասին, ընդառաջ է գնում, շնորհավորում նրա տարած մեծ հաղթանակը, ապա նահատակի գլուխը ցուցադրում է քաղաքում՝ նպատակ ունենալով մի կողմից ընդգծել իշխանությունների ուժը, իսկ մյուս կողմից՝ ահաբեկել հայերին: Իրադարձություններին անմիջական ականատես Եղիշե Չիլինկիրյանը պատմում է, որ թափորը մտավ Բիթլիս, հասավ կառավարչատուն, մարդիկ հավաքվեցին և սկսեցին դիտել տեսարանը: Արարողությունը տևեց կես ժամ: Ապա հայդուկապետի գլուխը հանձնեցին

<sup>1</sup> «Սերոբ Աղբիւր (կեանքն ու գործունէութիւնը)», Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1926, № 12, էջ 77:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 79:

<sup>3</sup> «Զօրավար Սմբատի յուշերը», Ա հատոր, էջ 117:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 121:

քաղաքի եկեղեցու ավագ երեցին, սա էլ՝ Չիլինկիրյանին, որը գիշերվա ժամը 3-ին այն թաղեց Ս. Կարմրակ եկեղեցու գավթում<sup>1</sup>: Աղբյուր Սերոբի մարմինը մնաց ու թաղվեց Գելիեզուզանում, իսկ հետագայում նրա կողքին ամփոփվեց 1904 թ. Սասունի ապստամբության հերոս Հրայրը:

Սուլթան Համիդը Բշարե Խալիլին ու հայ դավաճաններին պարզևատրեց շքանշաններով ու այլ պարգևներով: Բիթլիսի իշխանությունները Սոսեին առժամանակ փակեցին բանտում, իսկ հետո ազատ արձակեցին<sup>2</sup>:

Հայ ազատագրական պայքարի նշանավոր հայդուկապետ Աղբյուր Սերոբի սպանության վրեժը լուծվեց 1900 թ. աշնանը. Աղբյուր Սերոբի գինվորներ Գևորգ Չաուշն ու Անդրանիկը ոչնչացնում են դավաճան Ավեի ողջ գերդաստանը և սպանում Բշարե Խալիլին նույն ձևով, ինչպես Աղբյուր Սերոբի գլուխը ցցի վրա անցկացրած շրջում էին փողոցներով՝ որպես Աղբյուր Սերոբի արդար արյան վրեժ:

*Կարճ տևեց Սերոբի հերոսական մաքառումներով լեցուն հայդուկային կյանքը: Բազմաթիվ կռիվներում թշնամու մեծաքանակ ուժերի դեմ մարտնչելիս մշտապես հաղթանակի դափնիներ վաստակած Աղբյուր Սերոբը տասնամյակներ անց էլ շարունակում է մեծարվել: Հայ ժողովուրդը չմոռացավ Տարոնի դյուցազնին. երգերով ու բանաստեղծություններով անմահության առաջնորդեց նրան և իր վտանգված պահին շուրթե-շուրթ օրվա մարտակոչ դարձրեց՝ «Ով որ քաջ է, ինչ կսպասե, արդեն ժամանակն է, թող գա...»:*

**Карине Егиазарян, Кармиле Егиазарян, Ахбюр Сероб (жизнь и деятельность),-** Ахбюр Сероб (Сероб Варданян) родился в 1864 г. в селе Сохорт области Хлата. В 1896 году Сероб, приобретая оружие на Кавказе, формирует отряды самообороны, распределяя их по армянским деревням. В 1897 г. он вел бои с турецкими войсками у сел Техут и Сохорт. 20-ое октября 1898 года вошло в историю как одно из героических страниц “ фидаинского движения ”. Вблизи деревни Бабшен отряд Сероба даи бой до заката, в результате чего было уничтожено множество вражеских солдат

После сражения турецкое правительство яростно преследовало Ахбюра. Покинув Хлат он укрылся в Сасуне. В 1899 г. его отряд был осажен турецкими войсками в селе Гелиегузан. Несмотря на то, что Сероб был отравлен, он до конца сражатася с турками. Тело было обезглавлено врагом.

Ахбюр Сероб,- один из предводителей первого поколения фидаинов. Народ его называл Ахбюр Сероб, т. е. "дающий жизнь" Сероб. Он известен также как Богатырь или Аслан Немрута.

**Karine Yeghiazaryan, Karmile Yeghiazaryan, Aghbyur Serob (biography and activity),-**Aghbyur Serob (Serob Vardanyan) was born in 1864 in the village of Sokhort in Khlat. In 1896 Serob formed self-defence groups, distributed them in villages, procured weapons from the Caucasus. During 1897 he fought against the turks in Teghut (province of Bitlis) and in Sokhort. One of the heroic pages of the history of the fedayeen movement was the battle on October 20, 1898, where Aghbyur Serob's group fought against the enemies and defeated them near Babshen village. The battle lasted until late afternoon. The enemy had many victims.

After the battle the turkish government pursued him everywhere. Leaving Khlat he settled in Sasun. In 1899 he was surrounded in the village of Gelieguzan. The Turks managed to have him poisoned, but Serob continued to fight until impending death. His body was beheaded.

Aghbyur Serob was one of the head figures of the first generation of fedayeen movement. People called him Aghbyur Serob, which means "life-giving" Serob.

He is also known by the names of the Giant of the Aslan of Nemrut.

<sup>1</sup> Տե՛ս Եղիշէ Եպս. Չիլինկիրեան, նշվ. աշխ., էջ 83:

<sup>2</sup> Տե՛ս Սերոբ Վարդանեան, Աղբիւր Սերոբ, էջ 28: